ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը. ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

2. Զբաղեցրած պաշտոնը. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

3. Գործուղման վայրը և ժամկետները. Ամման, Հորդանանի Հաշիմյան Թագավորություն, 2018 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև նոյեմբերի 5-ը:

4. Հրավիրող կողմը. Հորդանանի Հաշիմյան Թագավորության քաղաքացիական ավիացիայի կարգավորման հանձնաժողով:

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը). «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հորդանանի Հաշիմյան Թագավորության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագրի պաշտոնական ստորագրում:

6. Քննարկված թեմաները. Ավիացիայի և օդային փոխադրումների ներուժին ու զարգացմանն ուղղված հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Տեղի է ունեցել հանդիպում գլխավոր հանձնակատար Հաիթամ Միսթոյի հետ, ինչպես նաև հանդիպումներ Հորդանանի քաղաքացիական ավիացիայի կարգավորման հանձնաժողովի բաժինների ներկայացուցիչների և աէրոնավիգացիայի ղեկավարների հետ:

Արդյունքներն հետևյալն են.

1) Ստորագրվեց Օդային Հաղորդակցությունների մասին Համաձայնագիր:

2)Տեղի ունեցավ աշխատանքային փորձի և մասնագիտական գիտելիքների փոխանակում քաղաքացիական ավիացիայի և աէրոնավիգացիայի ղեկավարների հետ: Այստեղ քննարկվեցին կառավարությունների հետ փոխգործակցության օպտիմալ ուղիները, ազգային փոխադրողի դերը, աշխատավարձերի օպտիմալ մակարդակը, ինչպես նաև խոչընդոտների վերահսկման հնարավորությունը, օդանավակայանում անվտանգության ապահովման ավելի լավ մոնիթորինգը, աէրոնավիգացիոն տեղեկատվական ժողովածուների համօգտագործման

պայմանները, քննարկվել է նաև այն, թե որը պետք է լինի ավիացիոն լեզուն և ինչու, և վերջապես օդային հարկերի մակարդակներն ու լուծումները:

3) Տեղի են ունեցել հանդիպումներ «Քուին Ալիա» միջազգային օդանավակայանի գլխավոր տնօրեն Քյելդ Բինգերի, Ուղիների և Շուկայի զարգացման մենեջեր Օմար Սվեյսի և Մարքեթինգի ու Կապի բաժնի տնօրեն՝ Զահիա Նասանի հետ: Վերոնշյալ հանդիպումների ժամանակ քննարկվել են Հորդանանից դեպի Հայաստան ուղիղ չվերթների հնարավորությունը, ինչպես նաև տեղի է ունեցել գիտելիքների փոխանակում այն թեմայի վերաբերյալ, թե ինչպես են նրանք իրականացնում «Քուին Ալիա» միջազգային օդանավակայանի ուղիների զարգացումը: Ներկայացվել է համատեղ շնորհանդես՝ ներառելով կարևոր տվյալներ հորդանանյան ավիաընկերությունների համար: Ավելին, քննարկվել է, թե ինչպես են նրանք բոլորովին վերջերս ներգրավել Ryanair-ին և Easyjet-ին հորդանանյան շուկա:

4) Տեղի է ունեցել հանդիպում այնպիսի տեղական ավիաընկերությունների հետ, ինչպիսիք են՝ Royal Jordanian, Royal Wings, Jordan Aircraft, ինչպես նաև էլեկտրոնային նամակագրություն է եղել Air Arabia Jordan-ի հետ, վստահ լինելու համար, որ Հայաստանը հանդիսանում է նոր պոտենցիալ շուկա՝ ուղիղ չվերթներ իրականացնելու համար: Այս փուլում Հորդանանի ավիաընկերության համար ձեռնտու չի թռիչք իրականացնել դեպի Հայաստան, քանի որ Royal Wings-ը և Air Arabia Jordan-ը դադարեցնում են իրենց գործունեությունը: Jordan Aviation-ը պատրաստ կլինի թռիչքներ իրականացնել, միայն եթե Հայաստանի կառավարությունը սուբսիդավորի իր թռիչքները: Իսկ Royal Jordanian-ը ունի շատ սահմանափակ քանակությամբ օդանավեր և խուսափում է ցանկացած տիպի ռիսկից:

5) Տեղի է ունեցել հանդիպում «Տանիա Տուրի» (տեղական տուրիստական գործակալություն) գործադիր տնօրեն Բիշարա Սավալհայի հետ: Նա նշել է, որ Աքաբայի հատուկ տնտեսական գոտու իշխանությունը ձեռք է բերում Royal Wings-ը՝ մեծացնելով իրենց ինքնաթիռների քանակը: Այս դեպքում նա կկարողանա բլոկավորել որոշակի նստատեղեր դեպի Հայաստան՝ ավիաընկերության հետ ռիսկը կիսելու նպատակով: Նա նաև նշել է, որ ունի ճապոնական շուկայի 95%-ը տարածաշրջանում և կփորձի ճապոնական զբոսաշրջիկներին ուղղորդել դեպի Հայաստան:

6) Տեղի է ունեցել հանդիպում Հորդանանի զբոսաշրջության վարչության գործադիր տնօրեն Աբեդ ալ Ռասպաք Արաբիատի հետ՝ ընդհանուր գիտելիքների փոխանակման նպատակով: Նա ներկայացրել է, որ իրենք ներգրավել են բյուջետային ավիաընկերությունները օրինակ՝ Ryanair-ը, նույն պայմաններով, ինչպես մյուս ավիաընկերությունները (այսպիսով նրանք վճարում են նույն վճարները օդանավակայանում և նույն փոխադրման հարկը): Սակայն փոխարենը զբոսաշրջության խորհուրդը ձեռք է բերել մարքեթինգային ծառայություններ (օրինակ՝ Ryanair-ի վեբ-կայքում տեղադրված վահանակներ): Ավելին, տնօրենը նշել է, որ հայկական ավիաընկերությունները ամեն մի ուղևորի համար կարող են Հորդանանի կառավարությունից 60 դոլարի չափով սուբսիդավորում ստանալ, եթե նրանք կանոնավոր չվերթներ իրականացնեն դեպի Աքաբա՝ ներառելով զբոսաշրջիկների, որոնք առնվազն մեկ շաբաթ պատրաստ կլինեն մնալ այնտեղ: Սա հնարավոր կլինի միայն դեպի Աքաբա չարթերային թռիչքների դեպքում:

7) Մի շարք հանդիպումներ են տեղի ունեցել Հորդանանում Հայաստանի դեսպան և «Սուքլջյան Թրեյդինգի» տնօրեն Արթուր Սուքլջյանի հետ, Ամմանի Դուքսի հետ, թագավորական ընտանիքի լուսանկարչի և այլ տեղացի գործարարների հետ՝ քննարկելու հնարավոր ներդրումային ծրագրերը, որոնք կարող են ավելի շատ զբոսաշրջիկների ներգրավել դեպի Հայաստան, ինչպես նաև քննարկումներ են եղել բեռնափոխադրումների իրականացման մասին՝ հնարավոր ուղիղ չվերթների դեպքում:

8) 2018 թվականի նոյեմբերի 5-ին Դուբայում երկար տրանզիտի ընթացքում այցելություն կատարվեց Ջետեքս ընկերության գրասենյակ, որն ապահովում էր ավիատեխնիկական բարձրակարգ ծառայություններ: Այնտեղ կարճ հանդիպում եղավ իրենց գործադիր տնօրեն և նախագահ Ադել Մարդինիի հետ, որից հետո երկարատև հանդիպում նրանց փորձագիտական ճարտարապետ Լիլիթ Ավետիքյանի հետ՝ համագործակցության հնարավորությունները քննարկելու վերաբերյալ:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

- Օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրի ստորագրում:
- Հորդանանին դիմում է ներկայացվել, որպեսզի տրամադրեն տնտեսական ազդեցության ուսումնասիրություն, որն իրականացվել է Հորդանանի զբոսաշրջային խորհրդի կողմից, որն էլ իր հերթին հնարավորություն է տվել Հորդանանին ներգրավել բյուջետային ավիաընկերություններին:
- Հորդանանի ավիացիայի հանձնաժողովը խնդրել է ներկայացնել տեղեկատվություն գործող հայկական Օդանավ Շահագործողի Վկայականների օգտագործման հնարավորությունների մասին: Օդային փոխադրումների կարգավորման վարչությունը հետամուտ կլինի այդ հնարավորություններին:
- Տեղեկացնել տեղական հայկական ավիաընկերություններին, որ նրանք կարող են սուբսիդավորում ստանալ 60 դոլար արժողությամբ ամեն մի ուղևորի համար, Հորդանանի կառավարության կողմից, եթե նրանք կանոնավոր չվերթներ իրականացնեն դեպի Աքաբա՝ ներառելով զբոսաշրջիկների, որոնք պատրաստ կլինի այնտեղ մնալ առնվազն մեկ շաբաթ:
- «Տանիա Տուրի» տնօրեն Բիշարա Սավալիին կներկայացվի ՀՀ տուրիզմի կոմիտեի նախագահին և «Զվարթնոց» օդանավակայանի տնօրենին՝ տալով հնարավորություն տեղեկատվություն ստանալ օդանավակայանի ծախսերի, պետական տուրքերի և ուղևորահոսքի վերաբերյալ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

- Հնարավոր դարձնել Հորդանանի եւ Հայաստանի միջև ուղիղ չվերթերի իրականացումը.
- Մանրամասն քննարկում, թե ինչպես կարելի է ներգրավել բյուջետային ավիաընկերություններին դեպի Հայաստան.
- Մանրամասն քննարկում Հայաստանում քաղաքացիական ավիացիայի կազմակերպչական խնդիրները լուծելու համար:

Invalid signature

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

Signed by: REVAZYAN TATEVIK 7201880926

_____ ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

(ստորագրությունը)

09-ը նոյեմբեր, 2018թ.